Շրջակա միջավայրի նախարարության

գլխավոր քարտուղար պարոն Սերգո Աթանեսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## 1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ, ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Ռուզաննա Գրիգորյան, Միջազգային համագործակցության վարչության պետ

Լուսինե Ավետիսյան, Ռազմավարական քաղաքականության վարչության պետ

## 2. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Բելգիայի Թագավորություն (քաղաք Բրյուսել)

2023թ. հոկտեմբերի 13-ից 14-ը

## 3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն ՀՀ-ԵՄ էներգետիկայի, տրանսպորտի, շրջակա միջավայրի, կլիմայի հարցերով և քաղաքացիական պաշտպանության հարցերով ենթակոմիտեի ութերորդ նիստին

## 4. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ և ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Գործուղման հետ կապված ծախսերը՝ ներառյալ ճանապարհածախսը, կեցությունը և սննդի ապահովումը, կատարվել են 2023 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը հատկացված միջոցների հաշվին:

## 5. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

- ԵՄ քաղաքականության զարգացումներ,
- Կլիմայական ոլորտում ԵՄ աջակցություն,
- Փարիզի համաձայնագրի շրջանակներում Հայաստանի կողմից իրականացված գործողություններ, ներառյալ ԵՄ կլիմայական օրենսդրության համապատասխանեցման ընդունում և իրականացում,

- ՀՀ-ԵՄ համագործակցության առաջնահերթություններ,
- Գործառնական եզրակացություններ:

## 6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Հոկտեմբերի 13-ին Բրյուսելում կայացավ ՀՀ-ԵՄ էներգետիկայի, տրանսպորտի, շրջակա միջավայրի, կլիմայի և քաղպաշտպանության ենթակոմիտեի 8-րդ նիստը: Հաստատված օրակարգի համաձայն նիստը մեկնարկեց կլիմայական գործողությունների վերաբերյալ ԵՄ կողմի զեկուցմամբ: Զեկուցմանը հաջորդեց հայկական կողմի ելույթը՝ համապատասխանաբար յուրաքանչյուր կետով ներկայացնելով ընթացիկ վիճակը և նախատեսվող գործողությունները: Մասնավորապես ներկայացվեց տեղեկատվություն «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայից և Փարիզյան համաձայնագրից բխող պարտավորությունների կատարման վերաբերյալ՝ անդրադառնալով կլիմայի փոփոխության օրենքի մշակման ընթացիկ վիճակին, ցածր ածխածնային զարգացման ռազմավարությանը, հարմարվողականության պլաններին և այլն: Ներկայացվեց նաև ԵՄ կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի ընթացքը և համագործակցությունը, ինչպես նաև տեղեկատվություն ԵՄ Տայեքս գործիքի շրջանակում իրականացված փորձագիտական առաքելության այցի վերաբերյալ, որի նպատակն էր կլիմայի փոփոխության և Փարիզի համաձայնագրի ուղղությամբ կարողությունների հզորացումը: Եվրոպական կողմը տեղեկացվեց նաև, որ հաստատման փուլում է նաև Թայեքս ուսուցողական այցի հայտը՝ ուղղված ԵՄ կլիմայի օրենքին և Չափողականության, հաշվետվողականության և հավաստագրման (MRV)/Թափանցիկության շրջանակի բարելավմանը: Օրակարգով նախատեսված հաջորդ հարցը վերաբերում էր շրջակա միջավայր գլխին, ինչի շրջանակներում հայկական կողմը ներկայացրեց անդրադարձավ հետևյալ հարցերին՝

**ԵՄ քաղաքականության զարգացումները**, մասնավորապես տրամադրելով տեղեկտվություն ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ ճանապարհային քարտեզով նախատեսված գործողությունների ներքո իրականացված օրենսդրական բարեփոխումները:

**ԵՄ աջակցությունը շրջակա միջավայրի ոլորտում**, անդրադառնալով ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում ոլորտում իրականացված գործողությունները, ծրագրերի ընթացիկ վիճակը և հաջորդիվ

քայլերը: Մասնավորապես անդրադարձ եղավ ԵՄ կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի», «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի՝ ջրային տվյալներ» և «ԵՄ-ն հանուն կլիմայի» տարածաշրջանային ծրագրերին, ինչպես նաև «ԵՄ-ն հանուն Սևանի» Ծրագրի առաջընթացի:

Անդրադարձ եղավ նաև ԵՄ Թայեքս գործիքի շրջանակում իրականացված և նախատեսվող ծրագրային հայտերին, ինչպես նաև 2022թ. ավարտված «Հայաստանում կենսաբազմազանության ուժեղացված պահպանությունն ու կայուն օգտագործումը եվրոպական չափանիշներին համապատասխան» ԵՄ Թվինինգի ծրագրին:

**Հայաստանի քաղաքականությունը շրջակա միջավայրի ոլորտում** բաժնում ներկայացվեց ջրային ռեսուրսների, օդի որակի, թափոնների և քիմիական նյութերի կառավարման, կենսաբազմազանության պահպանության, ինչպես նաև օզոնային շերտը քայքայող նյութերի կառավարման ոլորտներում իրականացված բարեփոխումները:

## 7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հաստատվեց գործառնական եզրակացությունների նախագիծը, որը կվերջնականացվի հանդիպումից հետո համապատասխան գերատեսչություններում շրջանառվելուց հետո:

Միջազգային համագործակցության վարչության պետ

Ռուզաննա Գրիգորյան

Ռազմավարական քաղաքականության վարչության պետ

Լուսինե Ավետիսյան

03.11.2023թ.